

A row of five large, ornate, black-and-white decorative initial letters in a gothic or blackletter style. The letters are B, U, U, R, and U, each featuring intricate flourishes and a three-dimensional, blocky appearance.

Դուրս գացած լրագրաց ճանրու
ծախքը թիւրացուել էան վրայ է ։
Լրագրայն վերադերձաւ նուազի
կամ որ ե ինչ գրու թիւն թմբայ իր
— Տնորնին պիտի ուղղուի, Ղալա-
թիւս լատիւնը ճարտակի թիւ
198, Նսրա խան, Մասիսի գրասեն-
նակը ։
Ճարտուծ ծախքը չվճարուած նա-
մակ չնոր ունի իր ։

ᠯᠠᠭᠤᠰᠤᠨᠤᠯᠤᠰᠤ

Պ. Պօրտէանօ մաքսատան մէջ կա
տարուած խարդախութիւնն երևա
հանող խումբ մ'անձանց ներկայա
ցուցիչն է եղեր, հետեւ արար անոն

տաղանթ տարգրեցն հինգ վեց հար-
իւր լիւր միայն բաժին ինկեր է Պ.
Պօրտէանօն :

Յայտնուած խարդախութիւնը
տանն և ութ տարիէ ՚ի վեր կը գոր-
ծադրի և կերպ մաքսատան թարիֆա-
յին մէջ մեւա գտած սխալ մը պատ-
ճառու : օրով տէրութեան գանձն
երկու միլիոն լիւրայէն աւելի մնաւ կը-
րեր է :

« Կոպտականք օր » կըսէ վաղը թ,
երկուր տարիներ մաքսատանց վե-
րատեսչութիւն ընող և մաքսական
վարչութեան բարեկարգելն ըլլալու
համարան ունեցող վսեմ քեանի փա-
շան բաղատութիւն մը տայ այս ի-
րողութեան :

ԱՋԳԱՅԻՆ

ՀՐԱՆԻՐ ԱՌԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՄՆՍ

Ազգային ժողովը նիստ ունի յա-
ռաջիկայ ուրբաթ հոկտ. 27 ՚ի Ղա-
լաթի մէջ :

Ատենը պիտի բացուի ճիշդ ժամ
6ին և գոյուր 10ին :

Հրահրեալ են երեսփոխան է-
փէնտիներն՝ իրենց ազգասիրական
պարտականութիւնը կատարելու փու-
թալ :

21 հոկտ. 1878

՚ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պոլս

ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՕԼՈՍՑ
ԵՐԵՍՑԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՈՍ

ՕՐԱԿԱՐԳ.

1. Գատարարակութեան խնդիր .
2. Պատրիարքարանի պաշտօնակա-
լաց ամսական խնդիր .
3. Տեղեկագիր յարաբերութեան
գլխանի՝ Հիւանդանոցի Հոգա-
բարձութեան գէմ եղած գան-
դատանաց համար .
4. Տեղեկագիր նախաձեռնութեան
գլխանի՝ Պէկեան էֆէնտիի ամ-
բաստանագրոյն նկատմամբ :

Ատենադպիր
Հ. Ս. Աւանակեան

Երէկ ֆաղ. ժողովը գումարուե-
լով՝ հետեւեալ որոշմանքն քաւ :

1. Պէկեթիւթաշի թաղ. խորհրդոյ
և Պալեան Անտոն պէյի միջև ծա-
գած վաղըքի խնդիրն երկու քըն-
նութեան նիւթ ըլլալով՝ որոշումն
յաջորդ նստին մնաց :

2. Պատրիարքարանի պաշտօնէից
ամսականի խնդիրն Ազգ. ժողովոյ
տնօրէնութեան ենթարկել որոշեց :

3. Ղալաթի թաղ. խորհրդոյ
ընտրութեան համար թաղահամարի
գործողութիւն կատարել հարկ գա-
տեց :

4. Սեբաստացի վարդանի խնդ-
րոյն քննութեանն առթիւ ոստիկա-
նութեան դրան գործակատար Յա-
րութիւն էֆէնտիին հարկ եղած բա-
ցատրութիւններն ստանալով՝ ան-
պարտ գտաւ զայն և որոշեց որ ըստ
առաջնայի իւր պաշտօնը վարէ :

Աստիցմէ գատ՝ նաև ինչ ինչ մաս-
նաւոր խնդիրներով զբաղեցաւ :

Գոհութեամբ կը ծանուցանենք
թէ Կէմէյի ինկեր և կեղեցիկ շինու-
թեանն հանգանակութեամբ օգնե-
լու նպատակաւ՝ սրտն համար Պրու-
սայու Գեր. Բարթոլոմէոս եպիսկո-
պոսն յատկապէս մայրաքաղաքս ե-
կած է, Ամեն . Ս. Պատրիարք հօր և
վարչութեան հաճութեամբն ու ո-
րոշմամբը երեք անձերէ յանձնա-
ժողով մը կազմուած է, որք են
վսեմ. Սիմէն պէյ Սաքսոտեան,
վսեմ. Ստեփան, փաշա Ալիշան և
Մեծ . Աւետիս էֆէնտի Գօրլեան :

Մայր եկեղեցւոյ Արժ. Տ. Սուքիա-
քահանան ալ ՚ի դիւրութիւն հան-
գանակութեան յօժարած է անձամբ
հարկ եղած անգիրը շրջիլ և բարե-
պաշտ անձանց նուէրներն յանուն
յանձնաժողովոյ ընդունելով յանձ-
նել Սիմէն պէյի սենեակին՝ ուր գան-
ձուիլ որոշուած է :

Կէմէյի ինկ ծովեղերեայ և վաճա-
ռաշահ քաղաք մը ըլլալով մերազնից
հոն հաստատուելը մեծ ապէս վաճառ-
քերի է :

Ուստի կը յուսանք թէ այն տե-
սութեամբ ևս բարեւէր ազգայինք
պիտի փութան յօժարակամ՝ նպաս-
տել յիշեալ եկեղեցւոյ շինութեան,
որուն յարակից պիտի գտնուի նաև
վարժարան մ'ալ :

Գոհութեամբ կը լսենք թէ կրօ-
նական ժողովը երկուշաբթի օրը Ծայ-
րագունութեան տնօրէնան տուեր է
Արժ. վահան վարդապետին, իւրե-
առաջնորդական անդադարէն թաղի-
չոյ, և ՚ի վարձատրութիւն իւր վեր-
ջին օրերու Հայաստանի մէջ ըրած ծա-
ռայութեանց :

Բերայի քահանայներէն Տ. Միքա-
յէլ անուն քահանա՝ առանց Պատ-
րիարքարանի գիտութեան և օրի-
նաւոր բանակցութեան ընդ Պատ-
րիարքարանին Յունաց, Յօյն աղջիկ
մը Հայ տղու մը հետ պատկած և
սպա վրիժախաղարանէն ճարտիկու-
թեամբ մը հրամանին կորուցուե-
տեւ ըլլալով, գործը կը հակցուի
և երէկ կրօն. ժողովոյ կը ներկայաց-
ուի :

Կրօն. ժողովը որոշեց անմիջապէս
քննութիւն բանալ և ընդ նմին զՏ.
Միքայէլ քահանայագործութեան
գաղտնեցուց մինչև ցաւարտ քննու-
թեան :

Հայրենիք

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

Նոյեմ 2/14 հոկտ. 1878

... Խմբագրապետ .

Տիգրանակերտի կողմը, բազմադան
հուղակահարութեամբ համարուեալ աւա-
ղակապետ մը, որ հուաքած կողովուե-
ները ծպտեալ ծախել բերած էր հոս,
յայտնուելով ձերբակալ եղաւ, և շղթա-
յակապ Տիգրանակերտի կառավարու-
թեան ղրկուեցաւ : Կարծիք կար որ պա-
հապան զորքերը, աւաղակապետին ըն-
կերներէն ճամբան յարձակուի պիտի կը-
րեն :

Բերիա ճամբորդող բարեկամ մը լմեղ
լուր կը բերէ թէ քաղաքին մօտերը շրջա-
գայութեան երկու երեւելի Հրէայ սեղա-
նաւոր մը չարագործներէ պատանեւ է,
և թէ վերջին օրերս քաղաքին մէջ յա-
ճախ սպանութեան փորձեր կը օրոշահին
եղեր :

Ինչպէս միշտ, նոյնպէս և այս տարի
այգեստանեաց տասնորդի տուրը կա-
ռավարութեանն զնող Միւլթիլի մողա-
ները խեղճ այգետեսարց վրայ կը ծան-
րանան ու կը կեղեքեն : Ասանք տասա-
նորդի տուրը գրելու ելնելով, շատ ան-
գամ աշխատեալ ծանր տուրը կորուցն, զոր
վճարելու համար զժրադէ պղծութեամբ
այգայն բոլոր բերքովը նշանակեալ տա-
ննորդի տուրը գոցելու անկարող կը-
լան : Հիմա բաւական այգետեսարք իրենց
եղած այս տեսակ ղրկանաց համար կը
բողբեն, որոցչառը զժրադարար միշտ
Հայ են : Ձեռք կրնար հետեցնել թէ այն
բողբեն ինչ արդիւնք պիտի ունենայ . . .
Անցեալները Հիւանդանոցի մայրէ-

* Այս քահանան հոգեւոր Յակոբ Պատ-
րիարքի օրով կրն ունեցող Պրուսիայի
մը կոյս աղջկան մը հետ զաղտնարար
պատկած ըլլալով կորուցն լուծուեցաւ,
բայց յետոյ էլ վրիժախաղարանի իւր
թէ ապաշխարելով՝ Ս. Կաթողիկոսի հրա-
մանաւ վերահաստատուեցաւ քահանայու-
թեան մէջ :

լու մեր թղթակիցը (Պ. Կ. Ս.) անկից
մեզ կը զրէր թէ քաղաքէն հաղիւ 7—8
րոպէ հեռուն, Գայմաղամին քիթն տա-
կը, շրջականերէն Քաւուցի և Խըտըրու-
ցի Քուրդեր գալով մարտակուի մը փը-
ցուցած էին, որուն ակնանտեւ եղած
էր մեր թղթակիցը, և որոյ մէջ սպան-
եալք և վերաւորեալք կային : Սոյն մար-
տակուին հետեանքը մեզ գրուած էր,
սակայն մեր թղթակիցը կը յաւելուր թէ
կառարար Քուրդերը ՚ի վերջոյ քաղաք
մտնելով, համարձակ սկսան հրացան,
վառօղ եւ դնել, կոխը նորելու համար:
Գիւրին է մտախոհել թէ այն խառնա-
կութեանց ապարիպին մօտ բնակող Հա-
յոց կացութիւնը ինչպէս կրնայ ըլլալ . . .
Այս անգամ ալ Հիւանդանոցէն
մեզ հաղորդուած տեղեկութիւն մը կը
ծանուցանէ թէ տեղւոյն մօտակայ Քա-
ւու լեռան տարածքը Քրդերը (Ձազա)
քանի մ'օր առաջ խումբ կազմելով գիւր
ատեն Հիւանդանոցի կիջնեն, և կա-
ռավարութեանն բանալ բանալով (ուր ի-
րենցմէ բռնաորակեալ ըլլալ կը կարծուի)
բոլոր արդիւնքները կարճակէն ու իրենք
գարձեալ իրենց ապաստանարան լեռը կը
քաշուին : Աւելորդ է ըսել թէ յիշեալ
Քրդաց ծայրայեղութեան հասնելուն
պատճառը դատարանէն միջոցներու որս
կատարելն է : Կիւանդանք որ Հիւանդա-
նոցէն Գայմաղամին քով միայն Յ
զանգիւղէ կայ եղեր :

Արդէն հաստատուած իրողութիւն
մ'է որ Հիւանդանոցի Հայոց երեւելի-
ներէն Քոստեան Մ. Յակոբ անուն անձին
տունը գիւրն ատեն հուղակահարք մտնե-
լով, հարիւրաւոր լիւրաներու արծողու-
թեամբ ստացուածք կը գրաւեն, կրնը
սարսափաւոր կը ճգնեն, և նոյն իսկ Քո-
ստեան Մ. Յակոբը ծանրապէս վերաւո-
րելով կը մեկնին, որոց վախճանը դեռ
անորոշ է : այս չարագործութեանց իբրեւ
հեղինակ ոչ ոք կը ձերբակալուի :

Հետեւեալ հետաքրքրական տեղեկու-
թիւնն ալ քանի մը տողերով Ձեզ հաղոր-
դել կը փութամ :

Քաղաքէս դէպի հիւսիս ետքուց հե-
ռաւորութիւն ունեցող յայնկոյս Եփրա-
տայ Պէհէսնիի նահանգին մէջ քանի մը
չաբաթէ ՚ի վեր տեսակ մը տարօրինակ
կենդանի երեւան ելեր է : Այս կենդա-
նին հասարակ իշու մեծութիւն ունի . ա-
նոր գլուխը տեսնողն կը կարծէ թէ դայլ
է . սակայն ականջներուն ձեւ մարդոց
ականջին կը նմանի . կուրծքն՝ իւր լայ-
նութեամբը՝ տիւրէն տեսք մ'ունի . ե-
տեւը՝ նիւթա շան երեւոյթին յարմար է,
և ոտքերը աշխատեալ են, ինչպէս որ են ի-
շու ոտքերը : Սոյն տարօրինակ կենդա-
նին մարդակեր է : Ասանց երեւան ելնե-
լէն ՚ի վեր նոյն կողմանց խեղճ գիւղա-
ցիք աշխատութիւնը զրկելէ զաղբեցու-
ցած են . վստն գի չեն համարձակիր դաշ-
տերը իջնալու, ուր կը տեսնուին անոնց
ջուրները : Գիւրնը գիւղացիք իրենց տու-
ներուն մէջ կը փակուին, և նոյն կեն-
դանիք կուղան կը պտտին զիւղերուն
մէջ . բացօթեայ կեցած ոչխարաց հօտե-
քը կը մտնեն . սակայն միշտ մը չեն հօտ-
ցըներ . ուր երբեք հովիւ մը չկրնար կե-
նալ, իւր կենաց կորուստէն վախճալով
վստն գի անոնք ուր տեսնեն մարդ մը,
կը յարձակին զայն գիւղատեղ : Գետքիչ
մ'օր առաջ գետեղերը լաթ լուացող եր-
կու կին, և դաշտին մէջ երկու հօտա-
րած այր փեռեկապէն : Այս վտանգա-
ւոր կացութեան առթիւ տեղացիք շուա-
րած են . ճանրորդութիւն եւ չեն կրնար
ընել : Պէհէսնիցիք որ խումբ խումբ քա-
ղաքս միշտ կերթեկնէին, ժամանակէ
մը հետէ չեն երկիր հոս : Տեղացիք, որ
այս տեսակ կենդանաց մը հետքը ան-
գամ տեսած չէին, քանի մ'օր առաջ մեծ
բազմութեամբ տանց մէկ քանին հար-
ւածելու կեղնեն, սակայն իրենց ճարտար
զինաւարժութեան հակառակ, անոնցմէ
միայն երկու հատ կրնան հարուածել :
Տեղացիք պատմութիւնն է թէ յիշեալ
վայրագ կենդանիները յամառութեամբ
հրացաններու կրակին դէմ կը վազեն :

Ձեռք գիտեր թէ Միւլթիլի մէջ ու-
րիւ մարդարնակ տեղեր ալ այս տեսակ
կենդանիք տեսնուած են :

...

... Խմբագիր :

Լրագիր իւր 314 թուոյն մէջ կըսէ
թէ շիրնար ներել Գեր. Խորէն Արազա-
նին որ ինչու Լաւանեան կատարադրէ :

Մենք իրաւունք մը չունենալով քննա-
դատելու այն պատճառները՝ զոր ունի
Խորէն Արազան այս կամ այն կերպով
ստորագրելու, չգիտենք թէ Լրագրոյ
Մեծ . Խմբագիրը ո՞ր կից ունի այդ ի-
րաւունքը, որ մինչև անգամ չուղեր ե-
ղեր ներել :

Միթէ միայն Խորէն Արազանն է որ
առաջ ուրիշ մականուն և այժմ ուրիշ կը
գործածէ : Եթէ անոնց ներքէ կամ կը
ներէ Լրագրոյ Խմբագիրը, ինչու Խորէն
Արազանին չներեր : Ինչ աւելի իրա-
ւունք ունին նոքա որ մականուններն փո-
խեն, կամ իշխանական մականուններ
գործածեն :

Միթէ Լրագրոյ Մեծ . Խմբագիրը նո-
ցա ալ հարցուցած ունի՞ թէ ո՞ր գիւնա-
ներէ գտած են իրենց իշխանական ցե-
ղերէ սերած ըլլալը . ինչու միայն Խորէն
Արազանին կը հարցնէ զայդ :

Մենք յիշենք հոս մէկ քանի եկեղե-
ցական անձինք : Տեսնենք թէ Լրագրոյ
Խմբագիրը նոցա գէմ ալ դատ պիտի բա-
նայ արդեօք :

1. Նիկիոս արքեպիսկոպոս (Կաթո-
ղիկոս) Սայ, Աջապահեան, որ այժմ
կ'ստորագրէ Ռաբիէն :

2. Յովհաննէս Եպիսկոպոս վանեցի
Կարապետեան, որ յետոյ կ'ստորագրէր
Ռաբիէն :

3. Հովսէփ վարդապետ Այազմա-
լեան, հիմա Դիմաքեան :

4. Նիկիի վարդապետ Դիլլալեան, հի-
մա Աղաճան :

5. Կարապետ վարդապետ որ կ'ստու-
րագրէ Բաբբադան :

6. Հ. Արսէն Անդիմոսեան որ վերջը
կ'ստորագրէր Բաբբադան :

7. Տ. Գեորգ քահանայ Խաղիւղի
կ'ստորագրէ Աբդուլ :

Ընթերցողքս ձանձրութիւն չտալու
համար այս ցուցակը բաւական կը համա-
րենք : Լրագրոյ Մեծ . Խմբագիրը լաւ
գիտէ որ ազգին մէջ, մանաւանդ երե-
տասարդաց մէջ խիստ շատեր կան որ
մէյակի իշխանական մեծ անուններ վրա-
նին առած են : Օրինակի համար ահա
վարժապետ մ'ալ գիտենք Նուպարեան
վարժարանի աշակերտներէն՝ որ Լաւա-
նէ կ'ստորագրէ : Թող Լրագրոյ Մեծ .
Խմբագիրն իւր անկողնակալութիւնը
ցուցնէ, այս ամենքն ալ ՚ի դատ կոչելով
և կամ այս ամենուն վրայ ալ տարածե-
լով իւր աններողամտութիւնը :

Խնդրելով որ այն երկրորդ գրութիւնը
բարեհաճիք հրատարակել, մնամ

Անկողնակալ Հայ Բ

Տիկիսի Մշակ օրագրին հոկտ. 3
թուոյն մէջ հետեւեալ նամակը կը
կարդանք՝ Նոր—Նախիջևանէն դըր-
ուած :

Հետեւելով «Մշակի» թղթակիցներէն
ստէպ տուած խորհրդին, ես առանց ա-
ռաջարանի և վիճաբանական խորհր-
դածութիւններ ռուգում եմ հաղորդել այս
նամակով քաղաքում պատահած վերջին
անցքերը :

Մեր հոգեւոր դպրոցի կամ սեմինարի
սրբազան վերատեսուչը հինգ տարի մեր
մէջ բնակվելուց և չորս տարի իւր հիմնա-
նաւորմանը կառավարելուց յետոյ,
յուլիս ամիս մէջ իւր հրաժարականը ա-
ռաւ ու հեռացաւ մեզանից : Պատճառը
ինչպէս ասում են, մի քանի խաղաղ անհա-
մայանութիւններ են, որ պատահել են
սրբազանի և մեր անուանի բանաստեղծի
մէջ, որ դպրոցի հիմնարկութեան օրից
սկսած ուսուցիչ է այն տեղ և սրբազանի
վաղուցվայ համարաբանական ընկեր : Ան-
համայնութիւնը առաջին անգամ մեզ
յայտնի եղաւ ապրիլ ամիս մէջ, երբ
յանկարծ դուրս եկաւ մամուլի տակից
«Գրիգոր Կայիապայ» վերնագրով բրօշու-
րը, որի մէջ չափազանց պարզ գոյնեղով
նկարագրված է սրբազանի կեանքը . . .

[illegible]